

Թիւ 27086
Հոկտեմբեր 14, 1980

Բարեշնորհ
Գրիգոր Սրկ. Զմրուխտեան
Թորոնթօ.

Սիրելի Գրիգոր Սարկաւազ,

Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Ժխական Խորհուրդին հետ մեր խորհրդակցութեան ընթացքին ակնարկութիւն եղաւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ իբրեւ սարկաւազ ձեր պատասխանատուութեանց, մինչեւ մնայուն հոգեւոր հովիւի մը նշանակումը:

Այսու գիրով կը ճշդենք ձեր պատասխանատուութիւնները՝ որոնց յետամուտ պէտք է ըլլաք ցնոր տնօրինութիւն:

1. Պարտիք կազմել ցանկը այն անձերուն որոնք Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ համայնքին ծխականներն են եւ արտօնութիւն ստացած են պաշտամունքներուն եւ խորհրդակատարութեանց մասնակցելու իբրեւ սարկաւազ, կիսասարկաւազ, ուրարակիր կամ ղպիր:

Ձեր պատասխանատուութիւնն է ցանկը կազմել, եւ կարգը ճշդել թէ ո՞վ եւ ո՞ր պաշտամունքի կամ խորհրդակատարութեանց պիտի մասնակցի եւ ի՞նչ պաշտօն պիտի կատարէ, ըստ պահանջից, սարկաւազութենէ մինչեւ մոմակալութիւն:

Նարգապահութեան չհետեւողներու կամ անսաստողներու պարագային ձեր գրաւոր դիտողութիւնը մեզի կը հաղորդէք եւ մենք պատշաճը կը տնօրինենք:

2. Կիսակնկալենք որ դպրաց դասէն ուրիշ երկու անդամներու անուններ ներկայացնէք ծխական Խորհուրդին, որուն հաւանութեամբ պատասխանառու յանձնախումբը պիտի ըլլաք Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ կրօնական սպասներուն, գոյքին եւ գիրքերուն:

Յանձնախումբին պարտականութիւնը պիտի ըլլայ մանրամասն ցանկը կազմել Եկեղեցւոյ գոյից եւ սպասից, տարին մէկ անգամ վերստուգում կատարել, եւ նորոգութեանց եւ նոր գնումներու համար ծխական Խորհուրդին հետ որոշել ծախքերը եւ վճարումները:

Ծխական Խորհուրդի Ատենապետ Տիար Սարգիս Չիլինկիրեանի հետ վերջնական կարգադրութիւնները ամբողջացնելէ յետոյ՝ հասցէք մեզ տեղեակ պահել վերոյիշեալ երկու պատասխանառութեանց կապակցութեամբ ձեր կատարած կարգադրութեանց մասին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Օրինակ՝ Ծխական Խորհուրդի Ատենապետին